

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 21

### ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած խորհրդակցության

16.10.2017թ.

ք.Վանաձոր

#### Մասնակցում էին

- Ա.Դարբինյանը - մարզպետի տեղակալ
- Տ. Բաղդյանը - մարզպետի տեղակալ
- Հ.Թադևոսյանը - մարզպետի տեղակալ
- Ն.Սարգսյանը - աշխատակազմի ղեկավար
- Վ.Խաչատրյանը - աշխատակազմի ղեկավարի տեղակալ
- Հ.Պապոյանը, Ս.Լամբարյանը, Մ.Սայադյանը, Ա.Ջանազյանը, Դ.Մանուչարյանը, Գ.Հակոբյանը, Ա.Օհանյանը, Լ.Բերոյանը, Ա.Սահակյանը, Ս.Ղուբաթյանը, Ա.Աղլոյանը, Վ.Դոխոյանը, Հ. Մկրտչյանը - մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ
- Լ.Ասլանյանը - մարզպետի խորհրդական
- Ա.Մանուկյանը - մարզպետի խորհրդական

#### Օր ա կ ա ր գ ու մ`

1. Նախորդ շաբաթվա ընթացքում կատարված աշխատանքների մասին  
/Ձեկ. Ն.Սարգսյան/
2. ա) ՀՀ Վարչապետի Վանաձոր կատարելիք այցի մասին  
գ) Առաջիկայում Արցախ կատարվելիք այցի մասին  
/Ա.Նալբանդյան/
3. Պաշտպանության ոլորտում կատարվող բարեփոխումների մասին  
/Ձեկ. Ա.Դարբինյան/
4. Հոկտեմբերի 21-ին նախատեսված համապետական շաբաթօրյակի կազմակերպման աշխատանքների մասին  
/Ձեկ. Հ.Թադևոսյան/
5. Համայնքներում սեփական եկամուտների հավաքագրման մասին  
/Ձեկ. Հ.Պապոյան/
6. Նախադպրոցական ուսումնական հաստատությունների կազմակերպարավական նոր մոդելի տարբերակի մասին  
/Ձեկ. Մ.Սայադյան/
7. ա) Վանաձոր քաղաքի փողոցների վերանորոգման մասին  
բ) Հրատապ ծրագրերի ընթացքի մասին  
/Ձեկ. Ա.Ջանազյան/
8. Նոյեմբերի 5-ին խոշորացվող համայնքներում կայանալիք ընտրությունների մասին  
/Ձեկ. Դ.Մանուչարյան/
9. Վարչական հանձնաժողովի աշխատանքային ծրագրի գործունեության մասին  
/Ձեկ. Ա.Սահակյան/
10. Ներքին աուդիտի բաժնի մրցույթի կայացման մասին  
/Ձեկ. Ա.Աղլոյան/

Այլ հարցեր

### Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց`

1. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալ Հ.Թադևոսյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին`

Անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքներ տանել և ակտիվ մասնակցություն ցուցաբերել ս.թ. հոկտեմբերի 21-ին կայանալիք համապետական 3-րդ շաբաթօրյակի աշխատանքներին:

2. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալներ Ա.Դարբինյանին, Հ.Թադևոսյանին, Տ.Բադոյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության պետ Հ. Պապոյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Դ.Մանուչարյանին`

Անհրաժեշտ աշխատանքներ իրականացնել մարզի համայնքներում սեփական եկամուտների հավաքագրման պլանային ցուցանիշները ապահովելու ուղղությամբ:

3. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Մ.Սայադյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Դ.Մանուչարյանին`

Նախադպրոցական ուսումնական հաստատությունների կազմակերպահրավական նոր մոդելի կիրառման վերաբերյալ անհրաժեշտ աշխատանքներ իրականացնել համայնքներում և ստացված առաջարկությունները ամփոփելուց հետո` ներկայացնել տեղեկատվություն:

4. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Գ.Հակոբյանին`

Ըստ համայնքների և հողօգտագործողների` կատարել ուսումնասիրություններ վարելահողերի քանակի ճշտելու վերաբերյալ և հնարավորինս սեղմ ժամկետում ներկայացնել ամբողջական տեղեկատվություն:

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ